

Էյա Ղիսայան

ԲՅՈՒՋԱՆԴԻԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 12-ՐԴ ԴԱՐԻ 20-30-ԱԿԱՆ ԹԹ.

**Կիլիկյան Հայաստան, Բյուզանդական կայսրություն, Իկոնիայի սուլթանություն,
խաչակիրներ, Դանիշմանյան ամիրայություն,
Անտիոքի դքսություն**

Բագրատունյաց թագավորության անկումից հետո Բյուզանդիայի վարած հատուկ քաղաքականության հետևանքով հայ բնակչությունը գաղթեցվում է դեպի կայսրությանը ենթակա երկրներ՝ Փոքր Ասիա, Ասորիք, Կիլիկիա և այլուր: Այս քաղաքականությունը իրականացնելով՝ Բյուզանդիան ուներ մի քանի շարժառիթներ: Ամենից առաջ նա ձգտում էր հայ ֆեոդալներին չեզոքացնել և հայերի ռազմական դիմադրական ուժը կտրտել: Այնուհետև նրանց օգտագործել Արևելքում՝ արաբների, իսկ Արևմուտքում՝ կայսրության թշնամիների դեմ, Բյուզանդիայի արևմտյան մարզերը տնտեսապես զարգացնել, վերջապես դավանափոխության և հույների հետ ծուլելու դարավոր ավանդական երազանքը իրականացնել:

Առաջին հայացքից հայ և հույն եկեղեցիների միության հարցը զուտ կրոնական հարց է և քաղաքական պատմության տեսակետից հետաքրքրություն չի ներկայացնում: Բայց իրականության մեջ այդպես չէ: Միջին դարերում հայ ժողովուրդը դավանաբանական տեսակետից անջատվելով հույն եկեղեցուց՝ դրանով ոչ միայն ուզում էր ապահովել հայ եկեղեցու ինքնուրույնությունը հույն եկեղեցուց, այլև պաշտպանել իր քաղաքական անկախությունը, որը շարունակ ոտնձգությունների էր ենթարկվում Բյուզանդիայի կողմից: 12-րդ և նաև 14-րդ դարերում էլ, երբ հայ-հույն դավանաբանական հարցերը օրակարգի խնդիր են դառնում, դրդապատճառները նույնպես զուտ կրոնական չէին, այլ քաղաքական¹: Կիլիկիայի հայկական պետությունը շրջապատված էր թշնամի հարևաններով, որոնք չէին դադարում նրան նեղելուց: Այդպիսի պայմաններում առաջնահերթ խնդիր էր բարելավել հարաբերությունները Բյուզանդիայի հետ, որպեսզի գոնե հյուսիսում դաշնակից ունենա ընդդեմ ընդհանուր թշնամի Իկոնիայի սուլթանության, ինչպես և Անտիոքի խաչակիրների: Բյուզանդիայի համար էլ ցանկալի էր, որ Իկոնիայի սուլթանության և խաչակիրների թիկունքում ունենա դաշնակից ուժ ի դեմս հայկական թագավորության: Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդիայի փոխհարաբերությունների բարելավման համար առաջին քայլը եկեղեցիների մերձեցումն էր, դավանաբանական հարցերում վիճելի կետերի վերացումը: Սակայն Բյուզանդիան ուներ հեռուները գնացող

¹ . , , 1952, . 136-137:

նպատակներ: Նա եկեղեցական միության հարցի ներքո, ինչպես ասացինք, տեսնում էր նաև Կիլիկյան Հայաստանի քաղաքական ենթարկումը իրեն՝:

Արդեն 11-րդ դարի երկրորդ կեսին Բյուզանդական կայսրությունը երկրի ներքին և արտաքին քաղաքական կյանքում լուրջ դժվարությունների հանդիպեց: Պեչենեգների և նորմանների հարձակումները հյուսիսից և արևմուտքից, թյուրք-սելջուկների արշավանքներն արևելքից ծանր կացության մեջ դրեցին երկիրը: Խախտվեց երկրի ներքին կյանքը կարգավորող բանակաթեմային կառուցվածքը, որն այլևս չվերականգնվեց: Գրեթե ամբողջ Փոքր Ասիան մինչև 12-րդ դարի սկիզբը մատնված էր անիշխանության. բյուզանդական պաշտոնեությունը հեռացել էր, իսկ սելջուկ-թյուրքերի քոչվոր բանակները դեռ չէին հասցրել արմատ ձգել և վերջնականապես հաստատվել գրաված տարածքներում: Այդ անիշխանության տարիներին էր, որ քաղաքական պայմանները նպաստեցին Կիլիկիայում և նրա շրջակայքում (Մելիտինե, Եդեսիա, Անտիոք և այլուր) Փիլարտոս Վարաժնունու և նրա հետևորդների ղեկավարությամբ ստեղծելու անկախ իշխանություններ՝ ընդունելով մերթ Բյուզանդական կայսրության, մերթ մուսուլմանական պետական միավորումների գերակայությունը:

12-րդ դարի սկզբին Ալեքս Ա Կոմնենոսի (1081-1118 թթ.) ղեկավարությամբ կայսրությունը հիմնականում կանգնեցրեց նորմանների, պեչենեգների և հատկապես թյուրք-սելջուկյան նվաճողների մուտքը կայսրության կենտրոնական մահանգներ: Օգտվելով առաջին խաչակրաց արշավանքի ժամանակ ստեղծված բարենպաստ իրադրությունից՝ 1097/8 թ. Ալեքս Ա-ը Բյուզանդական կայսրության իշխանությունը վերահաստատեց Փոքր Ասիայի արևմտյան հատվածում (Նիկիա, Ջմյուռնիա, Եփեսոս, Սարդիկե, Ֆիլադելֆիա և այլուր): Երկրի ներքին կյանքում կայսրությունը հետզհետե անցնում է պայմանական հողատիրության նոր կարգին, միջոցառում, որի գլխավոր նպատակներից մեկը պետք է համարել բանակի ամրապնդումը: Սկիզբ է դրվում Բյուզանդիայի բարձրացման նոր փուլին՝ Կոմնենոսների կառավարման դարաշրջանին (1081-1185):

Եթե Ալեքս Ա-ի իշխանության տարիներին պեչենեգները և նորմանները դուրս շարտվեցին Բալկանյան թերակղզուց, ապա թյուրք-սելջուկյան հորդաները կարողացան հաստատվել Փոքր Ասիայում՝ իրենց իսկ ստեղծած պետական միավորումներով (Իկոնիայի սուլթանություն, Դանիշմանյան ամիրություն և այլն): Փոքր Ասիայում ստեղծված իրավիճակը անհանգստացնում էր բյուզանդական կայսրերին: Այդ էր պատճառը, որ կայսրությունը սկսեց ուղիներ փնտրել վերադարձնելու փոքրասիական տարածքները: 12-րդ դարի երկրորդ և երրորդ տասնամյակներում կայսրության արտաքին քաղաքականության առաջնային խնդիր էր վերահաստատվել Փոքր Ասիայի հյուսիսային և հարավային ծովափնյա շրջաններում, խանգարել սելջուկ-թյուրքերին ստեղծելու ռազմական և առևտրական նավատորմ, որը կարող էր մրցության մեջ մտնել կայսերական նավատորմի դի հետ² և լուրջ վտանգ

¹ Հ. Բարթիկյան, Նոր նյութեր Կիլիկյան հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին, Երևան, 1958, էջ 285:

² Մինչև Ալեքս Ա-ի զահակալությունը բյուզանդական նավատորմը փաստորեն դադարել էր հզոր ուժ ներկայացնելուց, և նորմանների դեմ կռվելու համար կայսրը ստիպված էր դիմել վենետիկցիների

դառնալ կայսրության առևտրական ու արտաքին քաղաքական կապերի, ընդհանրապես Միջերկրական ծովում միջազգային ծովագնացության համար: Փոքրասիական տնտեսական հարուստ շրջանների վերանվաճման քաղաքականությունը սկսած 11-րդ դարի 80-90-ական թթ.-ից հաջողությամբ իրականացնում էր Ալեքս Ա Կոմնենոսը և արդեն դարասկզբին կայսրությունը հիմնականում կանգնեցրել էր սելջուկ և դանիշման թյուրքերի մուտքը դեպի Սև և Միջերկրական ծովեր¹: Մյուս կարևոր խնդիրը, որը ծառայել էր Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականության առջև և ստացել էր իր լուծումը 12-րդ դարի 20-ական թթ., դեպի Ատալիա տանող ցամաքային ճանապարհի մաքրումն էր Իկոնիայի սուլթանության զինված ջոկատներից: Երրորդ խնդիրը կայսերական բանակի համալրումն էր թյուրքական և ընդհանրապես «բարբարոս» ժողովուրդների զորամիավորումներով²:

Փոքր Ասիայում Բյուզանդական կայսրության անմիջական հարևանները երկուսն էին Իկոնիայի սուլթանությունը³ և Դանիշմանյան ամիրայությունը⁴: Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը որոշող էական գործոններից էին այդ երկու քաղաքական միավորումների հետ փոխհարաբերությունները. ծագած հակասությունները ամեն մի հարմար առիթով օգտագործում էր Բյուզանդական կայսրությունը՝ թշնամանք սերմանելով նրանց միջև և սեփական շահերի համար օգտագործելով այդ պետությունների ներսում ծագած յուրաքանչյուր բախում: Իկոնիայի սուլթանության և Դանիշմանյան ամիրայության հետ Բյուզանդիայի քաղաքական փոխհարաբերությունները կարելի է բնութագրել հետևյալ ձգտումներով.

ա) Օգտվել Իկոնիայի սուլթանության և Դանիշմանյան ամիրայության քաղաքական բախումներից և երկպառակչական պատերազմներ հրահրել նրանց ներսում և միմյանց միջև, բ) Դանիշմանյան ամիրայանը դուրս չպստել մինչև Հալիս գետը ընկած մերձսևծովյան տարածքներից և ամրացնել կայսրության պաշտպանական

օգնությանը, սակայն արդեն 1087թ. պեչենեգների դեմ բյուզանդացիները դուրս են բերում սեփական նավատորմ:

¹ Այս դրույթը բավականին հստակ ընդգծում է Եվստաթիոս Սոլունցին:

² Այդ քաղաքականությունը հաջողությամբ կենսագործվում էր նաև Դանուբով կայսրության տարածքները ներխուժած ցեղերի նկատմամբ: Այս առումով ուշագրավ է Հովհաննես Կիննամոսի հաղորդումը, ըստ որի բյուզանդական բանակում կարող էին ծառայության մտնել միայն այն բարբարոսները, որոնք ընդունում էին կայսրության պաշտոնական եկեղեցու դավանությունը:

³ Չնայած Աննա Կոմնենեն հայտնում է, որ 1116թ. Իկոնիայի սուլթանության հետ կնքած հաշտության պայմանագրով թյուրքերը հրաժարվեցին իրենց նվաճումներից և կայսրության սահմաններ ճանաչվեցին Ռոմանոս Դիոգենեսի ժամանակաշրջանի սահմանները՝ այնուամենայնիվ Հովհաննես Կիննամոսի և Նիկետաս Խոնիատեսի երկերից երևում է, որ Հովհաննես Բ Կոմնենոսը իր իշխանության առաջին տարիներին ստիպված էր մտնել Մեանդրի դաշտ և գրավել Լաոդիկիան, Սոզոպոլիսը և Ատալիայի հարևան շրջանները:

⁴ Դանիշմանյան ամիրայան հետ կայսրությունը սահմանակից էր Տրապիզոնի դքսության և սևծովյան մի շարք տիրույթներով: Թյուրքական ամիրայությունը խանգարում էր Բյուզանդական կայսրությանը ցամաքով իրեն միացնելու Տրապիզոնի դքսությունը: 12-րդ դարի 30-ական թթ. Հովհաննես Բ Կոմնենոսը երկարատև պայքար է սկսում Կաստանոն ամրոցի և Գանգրա քաղաքի համար: Այս գործողություններով կայսրությունը նպատակադրվել էր վերագրավել մինչև Տրապիզոն ընկած սևծովյան տիրույթները և ստիպել Տրապիզոնի դուքս Կոստանդին Գաբրասին հրաժարվելու կենտրոնախույս ձգտումներից:

կառույցները այդ շրջանում: Այդ գործողությունների շնորհիվ Բյուզանդական կայսրությանը ցամաքով միացնել մինչև այդ միայն ծովով կայսրության հետ կապված Խալդիա հին բանակաթեմը՝ Տրապիզոն կենտրոնով, գ) հաստատուն դարձնել Իկոնիայի սուլթանության և Բյուզանդական կայսրության սահմանները և արևելքից ու հյուսիսից վնասագերծել միջերկրածովյան շրջանները, հատկապես Ատալիայի նավահանգիստը, որը հենակետ պիտի ծառայեր դեպի Յուսիսային Ասորիք ռազմարշավին:

Ամբողջ 12-րդ դարում Բյուզանդիան համառորեն ձգտում էր նվաճել Կիլիկիան, որն իր հերթին նույնպիսի համառությամբ դիմադրում էր Բյուզանդիայի ոտնձգություններին: Հավանաբար, 1100 թ. կամ մեկ տարի առաջ Բյուզանդիան վերականգնել էր իր տիրապետությունը Դաշտային Կիլիկիայում: 1104 թ. խաչակիրների միացյալ ուժերը Խառանում պարտություն կրեցին Հալեպի ամիրա Ռոդվանից: Բյուզանդիան շտապեց օգտագործել խաչակիրների այս պարտությունը և նույն թվականին վերականգնեց իր իշխանությունը Մամեստիայի, Ադանայի և Տարսոսի վրա: 1108 թ. խաչակիր Տանկրեդը, օգտագործելով Դուրացոյում Բյուզանդիայի ֆրանկ-խաչակիրներից կրած պարտությունը, նորից գրավեց Դաշտային Կիլիկիան: Շուտով խաչակիրներն ստիպված եղան Բյուզանդիայի հետ կնքած հաշտության պայմանագրով հրաժարվել Դաշտային Կիլիկիայից և Յուսիսային Ասորիքից: Նման պայմաններում Կիլիկյան Հայաստանին վիճակված էր պայքարել Բյուզանդիայի դեմ Դաշտային Կիլիկիան ազատագրելու համար:

Իկոնիայի սուլթանության հետ Բյուզանդական կայսրությունը (1129-1139) փորձում էր պահպանել բարի-դրացիական փոխհարաբերություններ, իսկ Դանիշմանյան ամիրության դեմ վարում էր թշնամական քաղաքականություն:

Քաղաքական այս գիծը 12-րդ դարի 30-ական թթ. սկզբին խոչընդոտի հանդիպեց կայսրության ներսում: Պալատական ընդդիմադիր կուսակցությունը գլխավորում էր Իսահակ Կոմնենոսը՝ կայսեր եղբայրը: Կայսրության ներսում սկսված քաղաքական պայքարը փորձում էր օգտագործել Տրապիզոնի դուքս Կոստանդին Գաբրասը, որը 1126 թ. ինքնիշխան էր դարձել: Փաստորեն Ղազի Դանիշմանյանը Կաստանոնի և Գանգրայի համար մղվելիք պայքարի նախօրյակին Յովհաննես Բ Կոմնենոսի (1118-1143) արևելյան քաղաքականության դեմ պայքարող դաշնակցություն էր ստեղծել, որում ներգրավել էին Իկոնիայի սուլթանությանը, Տրապիզոնի դքսությանը և բյուզանդական պետության ու արքունիքի ինչ-ինչ սոցիալական խավերի քաղաքական շահերը արտահայտող Իսահակ Կոմնենոսին:

Կարճ ժամանակով այդ դաշինքին է միանում նաև Լեռնային Կիլիկիայի Ռուբինյան իշխան Լևոնը: Լևոնը, լինելով Բյուզանդական կայսրությանը ենթակա, միացել էր այդ քաղաքական դաշինքին՝ ենթարկվելով Ղազի Դանիշմանյանի ռազմական և քաղաքական ճնշմանը: Ասորի պատմիչը վկայում է 1131/2 թ. Ղազիի՝ Կիլիկիա ներխուժման մասին: «Լևոնը ենթարկվեց. նա երդվեց այլևս չներխուժել և ոչ էլ զինված մարդիկ ուղարկել ամիր Ղազիի երկրները և ամեն տարի հարկ վճարել Ղազիին: Վերջինս հավատ ընծայելով նրա խոսքերին, թողեց նրան և հեռացավ: Լևոնը խաբեց և

ոչինչ չտվեց: Ամիր Ղազին եկավ Մելիտեն: Նրա փեսա սուլթան Մասուդը և հույների կայսեր եղբայր Իսահակը, որ վերադարձել էր Գաբրասի մոտից, եկել էր Ղազիին Մելիտենում գտնելու: Ապա Իսահակը գնաց Լևոնի մոտ, և Լևոնը տվեց իր դստերը կայսեր բարեկամին երկու քաղաքների հետ՝ Մոպսուեստիայի և Ադանայի: Այնուհետև նրանց միջև վեճ ծագեց: Լևոնը ետ վերցրեց հույներից այն բոլորը, ինչին նրանք տիրում էին, և Իսահակը փախավ իր որդու հետ Մասուդ սուլթանի մոտ»¹:

Լևոն Ռուբինյանը Իսահակ Կոմնենոսին է հանձնել² մասնավորապես այն շրջանները, որոնց նկատմամբ հավակնություններ ուներ Բյուզանդական կայսրությունը, և որոնք կայսրության սեփականությունն էին համարվում Դեաբոլյան հաշտության պայմանագրով: Այս բոլոր իրադարձությունները գալիս են հաստատելու, որ մինչև Ղազի Դանիշմանյանի 1131/2 թ. ռազմարշավը Կիլիկիա, Կիլիկիան դաշնակցել է, կամ էլ բյուզանդամետ դիրք գրավելով՝ աջակցել է 1130/1 թ. և դրանից առաջ հյուսիսից Դանիշմանյան ամիրության վրա հարձակվող Յովհաննես Բ Կոմնենոսին³: Կարելի է ենթադրել, որ արդեն 12-րդ դարի 20-ական թթ. վերջին Կիլիկյան Յայաստանի և Բյուզանդիայի միջև դաշինք էր ձևավորվել ընդդեմ Դանիշմանյան ամիրության:

1126-1127 թթ. Իկոնիայի սուլթանության ներքաղաքական պայքարին ժամանակ առ ժամանակ միջամտում էին և բյուզանդական կայսրությունը և Կիլիկյան Ռուբինյան իշխանությունը: Իկոնիայի սուլթան Մասուդի դեմ ապստամբել էր նրա եղբայրը՝ Արապը, քանի որ սուլթանը չէր օգնել նրան Մելիտինում⁴ և թողել էր Մելիտենեն Ղազիին: Դանիշմանյան Ղազիի փեսա և դաշնակից սուլթան Մասուդը պարտություն կրելով Արապից, փախչում է Յովհաննես Բ Կոմնենոսի մոտ: Յատկանշական է, որ պայքարի առաջին փուլում Մասուդին դաշնակցում է և օգնում Բյուզանդական կայսրությունը: Կոստանդնուպոլսից վերադառնալով իր տիրույթները և միանալով Դանիշմանյան Ղազիին՝ նա Իկոնիայի սուլթանության սահմաններում վերականգնում է իր իշխանությունը: Արապը ստիպված հեռանում է Իկոնիայի սահմաններից և ապաստան է գտնում Կիլիկիայում՝ «Թորոս հայի» մոտ: Պայքարի երկրորդ փուլում Արապը պատերազմում է Ղազիի դեմ, որին դաշնակցում էր Մասարայի տեր ամիր Յաունան: Ըստ Միքայել Ասորու, 1127 թ. ամռանը Արապը «միավորեց թյուրքերին և հայերին»⁵: Չավանաբար, հենց այս պահից էլ Բյուզանդական կայսրությունը կամաց-կամաց հակվում է դեպի Արապը և Կիլիկիայի հայկական իշխանությունը, որոնք պայքարում էին Բյուզանդիայի արևելյան քաղաքականության ամենաոխերին հակառակորդներից

¹Ա. Ա. Բոգոյան, Բյուզանդիայի Արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Յայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Երևան, 1988, էջ 60-61:

²Ըստ Բար Երբեոսի՝ նշված քաղաքները Լևոնը հանձնել է Իսահակ Կոմնենոսին որպես ամուսնական օժիտ:

³Այլ կերպ անհնար է բացատրել Միքայել Ասորու նկարագրած՝ Ղազիի 1131/2թ. պատժիչ ռազմարշավը դեպի Կիլիկիա, և դրանից հետո Լևոնի վերցրած պարտավորությունը՝ այլևս զինված ջոկատներ չուղարկել ամիր Ղազիի երկրները:

⁴Արապը Մասուդի դեմ է դուրս գալիս 30.000 զորաբանակով և շրջապատում է Իկոնիա քաղաքը:

⁵Ա. Ա. Բոգոյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Յայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Երևան, 1988, էջ 63:

մեկի՝ Դանիշմանյան ամիրության դեմ: Սակայն Ղազի Դանիշմանյանը կարողանում է ջախջախել Արապին: Բյուզանդական կայսրությունը Դանիշմանյանների այս նոր հաջողություններից մտահոգված՝ ստիպված եղավ նյութական և բարոյական ավելի շոշափելի օգնություն ցույց տալ նրա հակառակորդներին: Պարտությունից հետո Արապը փախչում է Կոստանդնուպոլիս, որտեղ էլ կնքում է իր մահկանացուն:

Փոքր Ասիայում բարձրացող Դանիշմանյան ամիրությունը Կիլիկիայի Ռուբինյան հայկական իշխանության ամենահզոր հակառակորդն էր: Այդ է պատճառը, որ 12-րդ դարի 20-ական թթ. Թորոս Ա-ը դաշնակցում էր բոլոր այն քաղաքական ուժերի հետ, որոնք բախման մեջ էին այդ քաղաքական միավորման հետ և կարող էին թուլացնել նրա ռազմական հզորությունը: Թորոս Ա Ռուբինյանի քաղաքական այս կուրսը որոշ սրբագրումներով շարունակում նրա եղբայր Լևոն Ա Կիլիկիայի իշխանը: 1131/2 թ. կիլիկյան ռազմարշավով Ղազի Դանիշմանյանը նպատակադրվել էր հարված հասցնել Բյուզանդական կայսրության դեմ պայքարի ընթացքում իր թիկունքում գտնվող Լեռնային Կիլիկիայի հայկական իշխանությանը և այն ներգրավել հակաբյուզանդական խմբակցության մեջ: Նրա այդ քաղաքականությունը պսակվեց հաջողությամբ: Դանիշմանյան ամիրության հետ հաշտությունը և դրան հաջորդող դեպքերը Կիլիկիայում, հավանաբար, ուղղված էին Բյուզանդական կայսրության հակադանիշմանյան քաղաքականության դեմ, քանի որ Յովհաննես Բ Կոմնենոսը պատերազմական վիճակի մեջ էր Ղազի Դանիշմանյանի դեմ: Ռուբինյան հայկական իշխանությունը այլ ելք չուներ: Փոքր Ասիայում չէր մնացել որևէ հարևան քաղաքական միավորում, որը կարողանար հակահարված տալ Դանիշմանյան ամիրության աճող հզորությանը: Լևոն Ա-ի առջև կար երկու ճանապարհ՝ կամ մինչև վերջ շարունակել Դանիշմանյանների դեմ պայքարը, որը կարող էր ողբերգական հետևանքներ ունենալ Կիլիկիայի Ռուբինյան իշխանության համար, կամ էլ դաշնակցելով Դանիշմանյանների հետ՝ ժամանակավորապես իր կողմը գրավել: Հավանաբար, Լևոն Ռուբինյանը, ենթարկվելով Ղազի Դանիշմանյանի քաղաքական ճնշմանը, խզում է իր հարաբերությունները Բյուզանդական կայսրության հետ՝ դրանով իսկ Ռուբինյան հայկական իշխանությունը ազդարարում էր իր դուրս գալը Բյուզանդական կայսրության ստորակայի կարգավիճակից: Դանիշմանյան ամիրության և Կիլիկիայի հայկական Ռուբինյան իշխանության քաղաքական դաշինքը իր սուր ծայրով ուղղված էր ոչ միայն Բյուզանդական կայսրության¹, այլ նաև Արևելքի լատին իշխանությունների դեմ: 1132-1135 թթ. Բյուզանդական կայսրության և Դանիշմանյան ամիրության պատերազմների ընթացքում Կիլիկիայի հայկական իշխանությունը Դանիշմանյան ամիրության դաշնակիցն էր, Միքայել Ասորու վկայությամբ, նրանք միացյալ բանակներ էին դուրս բերում Յովհաննես Բ Կոմնենոսի դեմ:

Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականությանը 12-րդ դարում բնորոշ էին քաղաքական ամուսնությունները, որոնց միջոցով կայսրությունը փորձում էր լուծել արևելյան քաղաքականության առջև ծառայած որոշակի խնդիրներ: Յովհաննես Բ Կոմնենոսը դեռևս իր իշխանության սկզբին (1118-1120 թթ.) փորձում էր իր

¹ Այս դաշինքի գոյությունը և հակաբյուզանդական ուղղվածությունը նկատել է նաև Կլոդ Կահենը:

ավագ որդի Ալեքսի համար հարսնացու գտնել Անտիոքի նորմանական ծագում ունեցող իշխանադուստրերի մեջ:

12-րդ դարի 20-ական թթ. ապահովելով Փոքր Ասիայի հարավային ծովափերի անվտանգությունը, իսկ 30-ական թթ. Դանիշմանյան ամիրությանը հնարավորին չափով զրկելով սևծովյան տիրույթներից՝ Յովհաննես Բ Կոմնենոսը հնարավորություն ստացավ շարունակելու Կիլիկիայի և Անտիոքի իշխանությունների նկատմամբ Ալեքս Ա Կոմնենոսի մշակած քաղաքական գիծը: Նման քաղաքականության հիմնական առանձնահատկությունը այն էր, որ Բյուզանդական կայսրությունը հենվում էր 1108թ. Բոհեմունդ Անտիոքացու հետ Ալեքս Ա Կոմնենոսի կնքած Դեաբոլյան պայմանագրի դրույթների վրա՝ չնայած այն կենսագործելու բոլոր փորձերը ձախողվեցին դեռ Ալեքս Ա-ի կենդանության տարիներին: Բյուզանդական կայսրության և Անտիոքի լատինական իշխանության միջև Յյուսիսային Ասորիքի բաժանման պայմանագրի սկզբունքների համաձայն¹, Բյուզանդական կայսրությունը հետամուտ էր ամբողջ ծովափնյա հատվածի գրավմանը: Փաստաթղթի համաձայն Բյուզանդական կայսրությանը պետք է անցներ Կիոնոս և Յերմոն (Պիրամիո) գետերի միջև ընկած ամբողջ Դաշտային Կիլիկիան²: Գ. Միքայելյանը գտնում է, որ խաչակիրների նավահանգիստների առևտրական մրցակցությունը լուրջ վտանգ էր դարձել Եվրոպայի և Ասիայի միջև առևտրական միջնորդ դարձած Բյուզանդական կայսրության համար և «Անտարակույս, հենց այդպիսի պատճառներով է բացատրվում այն փաստը, որ Բյուզանդիան համառորեն ձգտում էր կրկին նվաճել Յյուսիսային Միջագետքը, Ասորիքը և Կիլիկիան, որոնք մինչև սելջուկյան ներխուժումը պատկանում էին նրան... Այդ նպատակին հասնելու համար հարկավոր էր սկզբում նվաճել Կիլիկիան, որպես հարմար հենակետ Ասորիքը և Միջագետքը վերագրավելու համար»³:

Բյուզանդական կայսրությունը ինչպես Իկոնիայի սուլթանության և Դանիշմանյան ամիրության, այնպես էլ Անտիոքի խաչակիր դքսության և Կիլիկիայի հայկական իշխանության նկատմամբ վարում էր նույն քաղաքական գիծը, փորձում էր խոչընդոտել այդ պետությունների ազատ մուտքը Սև և Միջերկրական ծովերը⁴: Բյուզանդական կայսրությունը 1136 թ. ստիպված էր դիմելու վերջին միջոցին՝ գեներալ միջոցով տիրանալու Լեռնային և Դաշտային Կիլիկիաներին և ծովափնյա Յյուսիսային Ասորիքին: Արդ, երկար տարիներ պատրաստություններ տեսած Յովհաննես Բ Կոմնենոսը ռազմարշավ է կազմակերպում՝ ակնկալելով, թե կբարձրացնի կայսրության հեղինակությունը

¹ Այս պայմանագրում արտացոլված Բյուզանդական կայսրության և Անտիոքի իշխանության միջև տարածքային բաժանումներին մանրամասն անդրադարձել է Էռնեստ Յոնիգմանը:

²Պայմանագրում նշված են Դաշտային Կիլիկիայի վարչական կարևորագույն կենտրոնները և նավահանգստային քաղաքները:

³Д. . . . , 1952, . 102-103:

⁴Բյուզանդական կայսրությունը 1130-1135 թթ. պայքարում էր Դանիշմանյան ամիրության դեմ տիրանալու համար Պափլագոնիա և Արմենիակոն բանակաթեմերի ծովափնյա շրջաններին: 1136-1138, 1142-1143 թթ. կայսրությունը նպատակադրվել էր վերագրավել Կիլիկիայի հայկական և Անտիոքի լատինական իշխանությունների ծովափնյա տարածքները:

Մերձավոր Արևելքում և կլուծի Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականության համար անկյունաքար դարձած խնդիրները:

Դեաբոլյան պայմանագրում Թորոսն ու Լևոնը համարվում են Բյուզանդական կայսրության ենթականեր, իսկ հայկական սկզբնաղբյուրներում Թորոսին երբեմն անվանում են պրոտոսեբաստոս: Հայկական սկզբնաղբյուրները Թորոս Ա Ռուբինյանի իշխանության տարիների հայ-բյուզանդական քաղաքական փոխհարաբերությունների վերաբերյալ միայն երկու դրվագ են ավանդում. ա) Կենտռոսկավիս ամրոցի գրավումը և երեք Մանտալե եղբայրների սպանությունը 1111 թ. փետրվար-1112 թ. փետրվար¹, բ) Անավարզա քաղաք-ամրոցի գրավումը հույներից²:

Չնայած Բյուզանդական կայսրությունը ցամաքային ուղղակի սահման չուներ Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի հայկական իշխանությունների հետ, սակայն այս տարածաշրջանի բազմաթիվ իշխանություններ ընդունում էին Բյուզանդական կայսրությունից իրենց կախվածությունը:

Իրերի վիճակը փոխվում է 1129 թ. Թորոս Ա-ի և նրա մանկահասակ որդի Կոստանդինի մահից հետո, երբ Կիլիկիայի իշխանապետության կառավարման լծակները իր ձեռքն է վերցնում Լևոն Ա Ռուբինյանը (1129/30-1136/7), որը մինչ այդ արդեն տիրում էր Կիլիկիայի որոշ շրջանների: Բարձրացող Կիլիկյան իշխանապետությունը 1129-36 թթ. կենաց և մահու պայքար է մղում Անտիոքի լատինական դքսության դեմ: Բախման հիմնական թատերաբեմը և պատճառը Դաշտային Կիլիկիան էր, որ Առաջին խաչակրաց արշավանքից հետո անցել էր Անտիոքի լատինական իշխանության հովանավորության ներքո:

Տվյալ ժամանակահատվածում Կիլիկյան հայկական իշխանության փոխհարաբերությունները բարեկամական չէին նաև հյուսիսային հարևանի՝ Դանիշմանյան ամիրության հետ: Չնայած Ռուբինյան իշխանությունը Թորոս Ա-ի գլխավորությամբ մասնակցում էր Արապի ստեղծած հակադանիշմանյան զինակցությանը (1125-1127 թթ.), սակայն Լևոն Ա Ռուբինյանը Կիլիկիայի նկատմամբ Անտիոքի իշխանության հավակնություններին հակահարված տալու միտումով և երկրի դաշտային հատվածը գրավելու մտադրությամբ հակվում է դեպի Դանիշմանյան ամիրությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ շրջանում Բյուզանդական կայսրությունը բոլոր ճիգերը գործադրում էր վերսկսելու սևծովյան ափերի գրավումը, ակնհայտ է դառնում, որ Լևոնը իր գործողություններով, փաստորեն քայլ էր կատարում Բյուզանդական կայսրության ստորակայի կարգավիճակից դուրս գալու և Դանիշմանյան ամիրության կողմը անցնելու համար՝ օգնելով Ղազի Դանիշմանյանին³: Հարց է

¹ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Ե., 1991, էջ 318-321:

² Ա. Ա. Բոզոյան, Բյուզանդիայի Արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Երևան, 1988, էջ 80:

³ Հովհաննես Բ Կոմնենոսի առաջին կիլիկյան ռազմարշավի ժամանակակից Միքայել Իտալիկոսը իր «Ներքողանուն» ուղղակիորեն վկայում է, որ Լևոն Ա Ռուբինյանը մերժելով բյուզանդական գերակայությունը՝ իրեն թագավոր է օծել: Միքայել Իտալիկոսի մոտ ակնարկ իսկ չկա հայ-դանիշմանյան դաշինքի մասին:

առաջանում. արդյոք Անտիոքի իշխան Բոհեմունդ Բ-ը չէ՞ր համաձայնեցրել իր գործողությունները Բյուզանդական կայսրության հետ:

Անտիոքի երիտասարդ իշխանի անհեռատես գործողությունները և նրա մահը (1129/30 թթ.) բացասական հետևանքների ունեցան Անտիոքի խաչակրաց իշխանության հետագա պատմության վրա:

1130/1 թ. Դանիշմանյան Ղազին կրկին արշավում է դեպի Կիլիկյան հայկական իշխանություն: Այս անգամ Ղազին նպատակադրվել էր խափանել Բյուզանդական կայսրության հետ Ռուբինյան իշխանության համատեղ գործողությունները, հակաբյուզանդական և հակալատին դաշինքի մեջ ներգրավել Լևոն Ա Ռուբինյանին:

Լևոն Ա Ռուբինյանը 1132 թ. փորձում է օգտվել դանիշմանյան Ղազիի հետ կնքած հաշտության պայմանագրից և ներխուժում է Դաշտային Կիլիկիա: Նա Իսահակ Կոմնենոսից գրավում է Մսիս, Ադանա քաղաքները, իսկ Տարսուճը՝ Անտիոքի լատին իշխանությունից: Չհանդուրժելով Ռուբինյան իշխանության հզորացումը Դաշտային Կիլիկիայում՝ Անտիոքի և Երուսաղեմի իշխանությունների միացյալ զորքերը ներխուժում են Լևոն Ա-ի տարածքները և կործանում, քարուքանդ են անում երկիրը. «անձնադիր լինելով տապալեցին զերկիր»: Դրանից հետո ավելի են սրվում Լևոն Ա Ռուբինյանի փոխհարաբերությունները Անտիոքի լատինական իշխանության հետ: 1133/4 թ. Լևոնը Եդեսիայի կոմսի հետ միասին դաշնակցում էր ընդդեմ Երուսաղեմի թագավորի և Անտիոքի լատին իշխանության: Չնայած Եդեսիայի կոմս Ջուլին Բ-ը Լևոնի քրոջ որդին էր՝ նրա հետ Ռուբինյանների դաշինքը հաստատուն չէր: 1136 թ., մինչև բյուզանդացիների դեպի Կիլիկիա և Յյուսիսային Ասորիք կատարած ռազմարշավը, Անտիոքի լատինները կարողանում են խաբեությամբ զերել Լևոն Ա Ռուբինյանին: Այս իրադարձությունը Սմբատ Սպարապետի Տարեգրության խմբագրությունը թվագրում է Քեսունի և Մարաշի տեր Պաղտինի դեմ Լևոն Ա Ռուբինյանի գործողություններից երեք ամիս հետո: Այս դիպվածը առիթ է դառնում, որ Կիլիկիայում գլուխ բարձրացնեն կենտրոնախույս ուժերը: Ներքաղաքական պայքարը ամենայն հավանականությամբ տեղի էր ունենում իշխանությունը օրինական զավակների ձեռքում պահելու համար և ջլատում էր առանց այն էլ արտաքին պատերազմներից թուլացած Կիլիկյան իշխանությունը: Այս փաստերը վկայում են այն մասին, որ Բյուզանդական կայսրությունը, վերջապես, հասել էր իր նպատակին. Կիլիկիայի հայկական իշխանությունը արդեն անգոր էր դիմագրավելու կայսերական բանակների ներխուժմանը:

Բյուզանդական կայսրությունը ուշի ուշով հետևում էր Կիլիկիայի հայկական իշխանության ներսում և նրա հարևանների միջև բորբոքված քաղաքական պայքարին, և բացառված չէ, որ գործուն միջամտություն էր ցույց տալիս: Կիլիկիայի հայկական և Անտիոքի լատին իշխանությունները միմյանց դեմ հանելով՝ Բյուզանդիան, իրոք, հասել էր իր նպատակին: Կիլիկիայի հայկական իշխանությունը 1134-1136 թթ. պատերազմների հետևանքով կորցրել էր ռազմական հզորությունը, Լևոն Ա Ռուբինյանի զերեվարությունից հետո ներքին պայքարը արյունաքամ էր արել ու բզկտել երկիրը: Չնայած Կիլիկիայի նկատմամբ Անտիոքի լատին իշխանության ժամանակավոր

հաջողություններին՝ Հյուսիսային Ասորիքի խաչակրաց այս իշխանությունն էլ ստիպված էր այդ տարիներին հանդես գալու մի քանի ճակատով:

Հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայում ստեղծված խառնաշփոթ իրադրությունը փորձեց օգտագործել Բյուզանդական կայսրությունը, իր զավթողական նպատակների իրագործման համար: Հովհաննես Կոմնենոս կայսրը Փոքր Ասիայում Մելիքդազի Դանիշմանյան իշխանի դեմ կազմակերպած մի շարք հաջող արշավանքներից հետո ձեռնարկեց մեծ արշավանք դեպի Կիլիկիա և Ասորիք: Այդ ռազմարշավի հաջողության համար Բյուզանդական կայսրությունը կենտրոնացրել էր իր բոլոր ուժերը: Հովհաննես Բ կայսրը Արևելք էր բերել գրեթե ողջ արքունիքը, հսկայական քանակությամբ ռազմական ուժեր, այդ թվում նաև վարձկան զորաջոկատներ: Այդ ռազմարշավով հարցականի տակ դրվեց և Կիլիկիայի, և Անտիոքի իշխանությունների անկախ գոյությունը: Հույները իրենց հույսը դրել էին Կիլիկիայի հայկական իշխանության և Անտիոքի բախման հետևանքների ու հայ-լատին թշնամական փոխհարաբերությունների վրա: Այդ հանգամանքը ընդգծում է բյուզանդական պատմիչ Հովհաննես Կիննամոսը:

Հովհաննես Բ Կոմնենոսի արևելյան քաղաքականության միջոցառումների մեջ առանձնանում են բյուզանդական բանակի առաջին և երկրորդ ռազմարշավները դեպի Կիլիկիա և Հյուսիսային Ասորիք: Այդ ռազմական գործողությունները նշանակալիորեն փոխեցին տարածքի քաղաքական քարտեզը և բարձրացրին կայսրության հեղինակությունը Մերձավոր Արևելքի քաղաքական շրջանակներում: Այնուամենայնիվ, Կիլիկիայի վրայով անցած երկու ռազմարշավներից իր արդյունքներով առանձնանում է առաջինը: Եթե բյուզանդական առաջին ռազմարշավի ընթացքում կայսրությունը նվաճեց Կիլիկիայի ողջ տարածքը և ստիպեց իր գերակայությունը ճանաչել Անտիոքի և Եդեսիայի լատինական իշխանություններին, ապա երկրորդ ռազմարշավը ավելի համեստ քաղաքական արդյունքներ ունեցավ. կայսրությունը կրկին վավերացրեց առաջին ռազմարշավի ընթացքում իր ձեռքբերումները:

Բյուզանդական կայսրության 1136-1138 թթ. ռազմարշավը դեպի Կիլիկիա և Հյուսիսային Ասորիք 12-րդ դարի առաջին կեսի բյուզանդական բանակի ամենամեծ հաջողությունն էր Փոքր Ասիայում և Մերձավոր Արևելքում ու մեծ նշանակություն ունեցավ կայսրության արևելյան քաղաքականության մշակման համար: Բյուզանդական պատմիչներ Հովհաննես Կիննամոսը և Նիկետաս Խոնիատեսը Հովհաննես Բ Կոմնենոսի Կիլիկյան ռազմարշավի առիթ են համարում այն, որ Լևոն Ա Ռուբինյանը, գրավելով կայսրությանը պատկանող բազմաթիվ իսավրական քաղաքներ, փորձել էր տիրել նաև Սելևկիային¹: Միքայել Իտալիկոսը Կիլիկիայի դեմ Հովհաննես Բ Կոմնենոսի ռազմարշավի պատճառ է համարում այն, որ Լևոն Ա Ռուբինյանը մերժել էր Բյուզանդական կայսրության գերակայությունը և իրեն թագավոր էր հռչակել²:

¹ Այս ռազմարշավը հայերին պատժելու գործողություն են դիտում նաև Միքայել Ասորին և ԺԳ դարի Անանուն ասորի ժամանակագիրը:

² Հր. Բարթիկյան, Միքայել Իտալիկոսի «Ներբողյանը» և Կիլիկիայի հայոց առաջին թագավորի խնդիրը, ՊԲՀ, 1984, N 4 էջ 218, 221: Միքայել Իտալիկոսի «Ներբողյանի» ամենակարևոր հատվածը.

Ռեզոլյուցիայի հիմնական նպատակն էր Բյուզանդական կայսրությանը ենթարկել Ատալիայից Տրիպոլի միջերկրածովյան առափնյա հատվածը, այդ ճանապարհին վերացնել Փոքր Ասիայի հարավ-արևելյան ելուստում ձևավորված Կիլիկիայի հայկական իշխանությունը, որը զենք էր բարձրացրել Բյուզանդական կայսրության ամենալուրջ հակառակորդներից մեկի՝ Դանիշմանյան ամիրության հետ: Գրավելով Տարսոնը, Ադանան, Անազարբան՝ կայսրը մտադիր էր շարժվել Վահկա բերդի վրա, սակայն շարժվեց նախ դեպի Անտիոք: Լատին դուքսը ստիպված եղավ հաշտություն խնդրել կայսրից ու ճանաչել Բյուզանդիայի գերիշխանությունը: Դրանից հետո կայսրը արշավեց դեպի Կիլիկիա՝ նպատակ ունենալով նվաճել նրա լեռնային մասը և վերացնել Հայկական իշխանությունը: Հովհաննես Կոմնենոսի այս արշավանքն ամենայն մանրամասնությամբ նկարագրել է բյուզանդական տարեգիր Նիկետաս Խոնիատեսը: Նա հաղորդում է, որ հույներին հերոսական դիմադրություն ցույց տվեցին հատկապես Անազարբայի և Վահկա բերդի պաշտպանները: Ըստ Խոնիատեսի «Անազարբան պաշտպանում էին լավ զինված ու քաջակորով մարդիկ»¹:

Ռուբինյան իշխանությունը Կիլիկիայում 1137 թվականից մի քանի տարով դադարեց գոյություն ունենալուց, սակայն շուտով՝ 1145 թ., նորից վերականգնվեց: 1137 թ. Հովհաննես կայսեր ունեցած հաջողությունը հեռու էր կատարյալ լինելուց: Նա չկարողացավ իրականացնել Ասորիքի և Միջագետքի գրավումը, ուստի կայսրը 1142 թ. նոր արշավանք կազմակերպեց դեպի Արևելք:

Էյա Ղիասյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը 12-րդ դարի 20-30-ական թթ. – 12-րդ դարի 20-30-ական թթ. Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը Կիլիկյան հայկական իշխանության վերջնական միացումն էր կայսրությանը: Բյուզանդական կայսրությունը ուշ ուշով հետևում էր Կիլիկիայի հայկական իշխանության ներսում և նրա հարևանների միջև բորբոքված քաղաքական պայքարին և գործուն միջամտություն էր ցույց տալիս՝ նպատակ հետապնդելով իրագործել տարածաշրջանում իր գավթողական նպատակները:

«Ճանախոսը, դիմելով հայոց Լևոն Ա իշխանին, ասում է. «Արդ, ի՞նչ կոչեմ քեզ, ով բարբարոս հայ, որ ճիշտ լինի: Ով Դիոսկորոսի հետևորդ և Սեվերոսի ուղեկից: Դո՛ւ թագավո՞ր, քե՞զ դիադեման, քե՞զ սանդալները: Մի՞թե չէիր հասկանում, որ այդպես վարվելով քո վրա ես հրավիրում կայսեր շանթերը: Քո ամբարտավանությունը ավելի մեծ է, քան Իքսիոնինը, գործածո՞ լաիրշությունը՝ ավելի մեծ, քան Տանտալոսինը, ով դու, իսկական Սալմոնես»:

¹ Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1971, էջ 680

Эля Гиасян, Восточная политика Византии и Киликия в 20-30-х годах 12-го века –
20-30- 12-

Elya Ghiasyan, Eastern politics of Byzantium and Cilicia (Kilikia) at the 20-30s of the 12th century – At the 20-30s of the 12th century one of the main directions of the eastern politics of Byzantine Empire was the final attachment of Cilician Armenian principality to the empire. Byzantine Empire was attentively following the political rivalry in the cilician armenian principality and between him and neighboring states aim inget his expansionist goals.

*Էլյա Դիասյան – ԵՊՀ պատմության ֆակուլտետի համաշխարհային պատմության
ամբիոնի մագիստրատուրայի շրջանավարտ*

